

ԼԻԼԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դասախոս

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԾՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԻՆ

Սույն հոդվածն անդրադարձնում է օտար լեզվի դասավանդման հաղորդակցական մոտեցման բաղադրիչներից մեկի՝ ռազմավարական իրազեկության կարևորությանը: Ռազմավարական իրազեկությունն ունկնդրին տեղեկություններ հաղորդելու և նրանից ստացած տեղեկատվությունը ճիշտ մեկնաբանելու, ինչպես նաև հաղորդակցության ընթացքում ծագած լեզվական խնդիրները լուծելու կարողությունն է: Հոդվածը քննության է առնում ռազմավարական իրազեկության հիմնական հայեցակարգերը, ինչպես նաև շեշտում ուսումնական ծրագրերում դրանք ներառելու և օտար լեզվի դասընթացում ուսումնասիրելու անհրաժեշտությունը:

Հիմնաբառեր. հաղորդակցական իրազեկություն, ռազմավարական իրազեկություն, փոխհատուցման ռազմավարություն, ռազմավարական գործիքներ և հնարքներ, լեզվական և ոչ լեզվական միջոցներ, շրջապատ, ուսումնական նյութ

JEL: Y8, Y9, Z1

Ռազմավարական իրազեկությունը (strategic competence) քերականական, հանրալեզվաբանական, խոսույթային իրազեկությունների հետ մեկտեղ, հաղորդակցական իրազեկության հիմքն է¹:

Շատ հաճախ մենք՝ օտար լեզու դասավանդողներս, ականատես ենք լինում այն իրավիճակին, երբ, հարց ուղղելով ուսանողին, վերջինից ոչ մի

¹ Տե՛ս Canale M., Swain M., Theoretical Bases of Communicative Approaches to Second Language Teaching and Testing //Applied Linguistics, 1980 (1), էջ 1–47:

արձագանք չենք ստանում: Պատճառն այն չէ, որ նա չգիտի պատասխանը կամ մեր հարցը չի ընկալել, այլ այն, որ չի կարողանում իր մտքերն արտահայտել օտար լեզվով: Այստեղ մենք բախվում ենք ուսանողների՝ ռազմավարական իրազեկության պակասի հետ կապված խնդրին²: Այսինքն՝ երբ ուսանողը, լեզվական առումով, հայտնվում է դժվարին կացության մեջ, ոչինչ չի պատասխանում: Հակառակ դեպքում, եթե նա զինված լիներ համապատասխան ռազմավարական գործիքներով (strategic tools), ապա այդ իրավիճակից դուրս գալու ելքեր անպայման կգտներ: Նույնիսկ ստույգ պատասխանը չիմանալու պարագայում, օգտագործելով ռազմավարական իրազեկության հնարքները, ուսանողը կկարողանար հաղթահարել իր առջև ծառացած խնդիրները: «Բազմիցս հայտնվելով նման իրավիճակներում՝ ուսանողը կորցնում է լեզվի նկատմամբ հետաքրքրությունը, դառնում ապաշահադրդված և հուսահատված», – նշում է Օգեյնը³:

Ռազմավարական իրազեկություն ասելով հասկանում ենք ուսանողների՝ ունկնդրին տեղեկություններ հաղորդելու և նրանից ստացած տեղեկատվությունը ճիշտ մեկնաբանելու, ինչպես նաև հաղորդակցության ընթացքում ծագած խնդիրները լուծելու կարողությունը⁴: Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել «հաղորդակցական ռազմավարություն» (communicative strategy), «ռազմավարական իրազեկություն» (strategic competence), ինչպես նաև «փոխհատուցման ռազմավարություն» (compensatory strategy) հասկացությունների, որոնք կարող են զուգահեռաբար գործածվել: Քոհենը «փոխհատուցման ռազմավարություն» ավելի լայն և ընդգրկուն եզրույթ է համարում՝ հավելելով, որ դա «գործածվում է լեզվական ոլորտում որևէ բաց փոխհատուցելու (լրացնելու) կամ մեղմելու համար»⁵: Նա նաև անդրադառնում է Բաքմանի «փոխհատուցման ռազմավարության» տեսական մոդելին, որը ներառում է գնահատման (assessment), պլանավորման (planning) և իրագործման (execution) փուլերը: Գնահատման փուլը հնարավորություն է տալիս գրուցակիցներին սահմանելու հաղորդակցական նպատակներ, պլանավորման փուլը՝ առբերելու լեզվաբանական իրազեկության անհրաժեշտ միավորները, նախատեսելու դրանց գործածումը, և, վերջապես, իրագործման փուլը՝ ի կատար ածելու պլանավորվածը: Ֆայերչը և Կասպերը, անդրադառնալով վերոհիշյալ փուլերին, լեզվական խնդիրների ծագումը կապում են վերջին երկու փուլերի հետ և առաջարկում դրանց լուծման հետևյալ տարբերակները. սովորողները կամ հավատարիմ են մնում իրենց առջև դրված հաղորդակցական նպատակներին և փորձում են լեզվական այլ կառույցների միջոցով գտնել դրանց հասնելու այլընտրանքային ուղիները, կամ փորձում են վերանայել իրենց նպատակները՝ հոգուտ ավելի պարզ լեզվական կառույցներ պահանջող միջոցների⁶:

² Տե՛ս **Ogane M.**, Teaching Communication Strategies, 1998. Available at <http://files.eric.ed.gov/fulltext/ED419384.pdf>.

³ Նույն տեղում, էջ 1:

⁴ Տե՛ս **Tarone E.**, Teaching Strategic Competence in the Foreign Language Classroom, 1983. Available at <http://files.eric.ed.gov/fulltext/ED278234.pdf>.

⁵ **Cohen A.**, Second Language Learning and Use Strategies: Clarifying the Issues, 1996. Available at <http://carla.umn.edu/strategies/resources/SPIclarify.pdf>.

⁶ Տե՛ս **Faerch C., Kasper G.**, Plans and Strategies in Foreign Language Communication // Strategies in Interlanguage Communication / Ed. by Faerch C. and Kasper G. London: Longman, 1983, էջ 210–238:

Եթե նախկինում օտար լեզվի դասավանդումն իրականացվում էր՝ հիմնվելով սոսկ քերականական իրազեկության վրա, ապա այժմ ավելի շատ կարևորվում են հանրալեզվաբանական և ռազմավարական իրազեկությունները՝ նպատակ ունենալով սովորողին ապահովելու այնպիսի գործիքներով, որոնց շնորհիվ վերջինս կարողանա հաղորդել անհրաժեշտ տեղեկություններ և տիրապետի որոշակի իրադրություններում օգտագործվող այնպիսի լեզվական կառույցների, ինչպիսիք են ներողություն խնդրելը, հրամաններ արձակելը և այլն⁷:

Ըստ Թրոնի՝ ռազմավարական իրազեկության երկու հիմնական հայեցակարգերը, որոնց պետք է անդրադառնալ օտար լեզվի դասին, հետևյալն են.

1. օտար լեզու սովորողի՝ ունկնդրին տեղեկությունները պատշաճ կերպով հաղորդելու հմտություն,
2. սովորողի՝ հաղորդակցական ռազմավարություններ կիրառելու կարողությունը, երբ խնդիրներ են ծագում տեղեկատվություն հաղորդելու ընթացքում:

Նա նաև քննության է առնում հետևյալ ռազմավարական հնարքները, որ սովորողները կիրառում են հաղորդակցության ընթացքում ծագած խնդիրները հաղթահարելու համար.

1. խուսափում (avoidance), երբ սովորողը փորձում է ընդհանրապես չխոսել այն երևույթների մասին, որոնք որոշակի լեզվով արտահայտելու պարագայում ունի լեզվական խնդիրներ,
2. շրջասություն (paraphrasing), երբ սովորողը փորձում է տվյալ երևույթի մասին խոսել՝ կիրառելով պարզունակ բառապաշար և լեզվական կառույցներ, ինչպես նաև նկարագրում է դա՝ նշելով չափը, ծնը, գույնը, կառուցվածքը, գործառնությունը, նմանությունը, ենթանշանությունը (hyponymy), երբ բառիմաստն ընդգրկվում է ավելի ընդհանուր բառիմաստի մեջ, օրինակ՝ parent/father,
3. փոխառություն (borrowing), որի դեպքում սովորողը կամ կատարում է բառացի թարգմանություն մայրենի լեզվից, կամ էլ օտար լեզվի իր չիմացած բառի փոխարեն կիրառում է այդ բառը մայրենի լեզվով,
4. դիմում՝ օգնություն ստանալու նպատակով (appeal for assistance), երբ սովորողը զրուցակցից հարցնում է այս կամ այն երևույթն արտահայտող բառը կամ եզրույթը,
5. անժանոթ բառը շարժումների միջոցով արտահայտելը /mime/, որի ժամանակ լեզվական միավորի (lexical item) փոխարեն կիրառվում է ոչ խոսքային մարտավարություն (non-verbal tactics):

Վերը նշված ռազմավարական հնարքները կարող են որոշ չափով մեղմել տեղեկատվություն փոխանցելու ընթացքում առաջացած դժվարությունները: Նվազագույն կամ սահմանափակ բառապաշարի պայմաններում թիրախային լեզվով հաղորդակցվելիս ուսանողները բախվում են մի շարք անխուսափելի լեզվական դժվարությունների, այսինքն՝ զգացվում է իրենց մտքերն ունկնդրին հասցնելու համար անհրաժեշտ լեզվական միավորների կամ կառույցների պակասը: Հաղորդակցական ծախսողումներից (communicative breakdowns) խուսափելու համար հարկ է դիմել հաղորդակցական

⁷ Տե՛ս **Tarone E.**, Teaching Strategic Competence in the Foreign Language Classroom, 1983. Available at <http://files.eric.ed.gov/fulltext/ED278234.pdf>.

ռազմավարության այս կամ այն տարրի օգնությամբ: Լեզվական անհրաժեշտ միավորների բացակայության պայմաններում հաղորդակցությունն ընդհատող պատճառները շրջանցելու նպատակով սովորողները, ովքեր ծանոթ չեն հաղորդակցական ռազմավարություններին, լեզվական դժվարությունների հանդիպելիս առաջին հերթին փորձում են խուսափել իրենց մտքերն արտահայտելուց, իսկ խուսափումն, ինչպես հայտնի է, հանգեցնում է հաղորդակցության ձախողման, որն անընդունելի է օտար լեզվի դասավանդման հաղորդակցական մոտեցման շրջանակներում⁸: Ֆայերչը և Կասպերը հաղորդակցական ռազմավարությունների երկու հստակ տարաբաժանում են առաջարկում՝ նվազեցման կամ խուսափման (reduction/avoidance) և ձեռքբերման (achievement): Քորդերն առաջարկում է մեկ այլ հետաքրքիր դասակարգում՝ խուսափման ռազմավարության համար գործածելով ռիսկից խուսափում (risk-avoidance), իսկ ձեռքբերման համար՝ ռիսկի դիմելու (risk-taking) եզրույթները⁹: Ձեռքբերման ռազմավարությունների միջոցով սովորողները փորձում են հարստացնել իրենց լեզվական պաշարները՝ հասնելով հաղորդակցական ավելի մեծ նպատակների: Այս առումով, արժեքավոր կարելի է համարել շրջաստության (paraphrase) կիրառումը, որի շնորհիվ հաջողությամբ կարելի է հասնել լեզվի հաղորդակցական նպատակների իրագործմանը:

Անդրադառնալով շրջաստությանը՝ Թրոնը նշում է դրա երեք բաղադրիչները. 1. տվյալ երևույթի մոտավոր ներկայացում (approximation), 2. բառաստեղծում (word coinage), 3. բառի բացատրություն կամ սահմանում (circumlocution)¹⁰: Արժե կանգ առնել շրջաստության հատկապես երրորդ բաղադրիչի՝ որպես հաղորդակցական և լեզվական հմտություններ զարգացնող արդյունավետ միջոցի վրա: Դա համարվում է բառափոխակերպման միջոց, որի դեպքում բառը կամ արտահայտությունը փոխարինվում են նույնիմաստ ընդարձակ նկարագրությամբ: Այսպես, օրինակ՝ export – the act of sending goods from one country to another:

Կախված սովորողների լեզվական մակարդակից՝ միևնույն բառի համար կարող ենք ունենալ մի շարք նկարագրություններ կամ բացատրություններ: Օրինակ՝ *export* – 1. the the act of sending goods from one country to another, 2. the act of selling commodities in foreign countries, 3. the act of transferring goods to be sold abroad:

Անդրադառնալով սովորողների լեզվական հմտությունների և հաղորդակցական ռազմավարությունների կիրառման կապին՝ հարկ է նշել, որ լեզվի իմացության մակարդակը մեծ նշանակություն ունի ռազմավարական գործիքների օգտագործման պարագայում: Այս մասին են վկայում Թրոնի, Քորդերի, Հայդի աշխատությունները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լեզվական ցածր մակարդակ ունեցող ուսանողներն ավելի հաճախակի են դիմում ռազմավարական հնարքների օգնությանը, քան լեզվական բարձր մակարդակ ունեցողները: Այսինքն՝ հաղորդակցական ռազմավարության կիրառումը և լեզվի լավ իմացությունը հակադարձ համեմատական

⁸ Տե՛ս **Paribakht T.**, The Relationship between the Use of Communication Strategies and Aspects of Target language proficiency: A Study of Persian ESL Students. Ph.D. Thesis, University of Toronto, 1982:

⁹ Տե՛ս **Corder S.**, Strategies of Communication. In Faerch, C. & Kasper, G. (Eds.), Strategies in Interlanguage Communication. London: Longman, 1983, էջ 7–12:

¹⁰ Տե՛ս **Tarone E.**, Teaching Strategic Competence in the Foreign Language Classroom, 1983. Available at <http://files.eric.ed.gov/fulltext/ED278234.pdf>

են. որքան բարձր է վերջինիս մակարդակը, այնքան քիչ են կիրառվում ռազմավարական գործիքներ, և հակառակը: Բայց, մյուս կողմից՝ հետաքրքրական է այն փաստը, որ լեզվական ցածր մակարդակ ունեցողներն ավելի հաճախակի են դիմում մայրենի լեզվից փոխառություններին, իսկ լեզվական բարձր գիտելիքներ ունեցողներն աշխատում են գործածել թիրախային լեզվի վրա հիմնված ռազմավարություններ, ինչպես օրինակ՝ շրջասություն, բառի բացատրություն կամ սահմանում, ինչն ավելի է հեշտացնում հաղորդակցական նպատակների իրականացումը:

Միևնույն հաղորդակցական առաջադրանքը կատարելիս լեզվական ցածր մակարդակ ունեցող ուսանողները, ունենալով թիրախային լեզվի բառապաշարի պակաս, ավելի հաճախ են բախվում լեզվական խնդիրների, ինչն էլ հանգեցնում է հաղորդակցական ռազմավարությունների ավելի հաճախակի կիրառմանը¹¹:

Հաղորդակցական ռազմավարությունների դասավանդումը առաջ է բերել մի շարք իրարամերժ կարծիքներ: Ոմանք համարում են, որ մայրենի լեզու ուսումնասիրելիս սովորողները զարգացնում են իրենց ռազմավարական ունակությունները և կարող են դրանք կիրառել նաև թիրախային լեզվով հաղորդակցվելիս: Քելերմանը, օրինակ, դեմ է օտար լեզվի դասընթացում ռազմավարական գործիքների ուսուցման անհրաժեշտությանը. «...լսարանում փոխհատուցման ռազմավարություն դասավանդելու համար չկա որևէ արդարացուցիչ հանգամանք: Սովորեցրեք լեզու և թույլ տվեք, որ ռազմավարություններն իրենց մասին հոգ տանեն»¹²:

Սակայն մեթոդաբանների մի ստվար բանակ էլ շեշտում է օտար լեզվի ուսումնական ծրագրերում փոխհատուցման ռազմավարությունների ներառման կարևորությունը՝ Ֆայերչ, Կասպեր, Թրոն, Դյոռնյե:

Վերջին տարիներին հաղորդակցական ռազմավարությունների վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ են գրվել, որտեղ մանրակրկիտ անդրադարձ է կատարվել դրանք օտար լեզվի ուսումնական ծրագրերում ներառելու և օտար լեզվի դասընթացում ուսումնասիրելու անհրաժեշտությանը: Քոհենը նշում է, որ եթե այդ ռազմավարություններն ուսուցանվեն օտար լեզվի դասաժամին, ապա կօգնեն ուսանողներին՝ ավելի հեշտությամբ արտահայտելու իրենց մտքերը թիրախային լեզվով¹³:

Շեշտելով դրանց ուսուցման կարևորությունը՝ ներկայացվում են մի շարք առաջադրանքներ, որոնք նպատակ ունեն մեղմելու հաղորդակցության ընթացքում ծագած բարդությունները, օգնելու, որպեսզի հաղորդակցությունը հնարավորինս հարթ և սահուն ընթանա, նվազագույնի հասցվեն ընդհատումները:

Օտար լեզվի անժանոթ բառերը դրանց բացատրություններով կամ նկարագրություններով փոխարինելու համար հարկ է սովորողներին տրամադրել ընդհանուր հասկացություններ նկարագրող հետևյալ հիմնաբառերը կամ ար-

¹¹ Տե՛ս **Paribakht T.**, Strategic Competence and Language Proficiency // Applied Linguistics. 6(2), 1985, էջ 132–145:

¹² **Kellerman E.**, Compensatory Strategies in Second Language Research: A Critique, a Revision, and some (non-) Implications for the Classroom // Foreign/Second Language Pedagogy Research: A Commemorative Volume for Claus Faerch, Clevedon, England: Multilingual Matters, 1991, pp. 142–161.

¹³ Տե՛ս **Cohen A.**, Second Language Learning and Use Strategies: Clarifying the Issues, 1996. Available at <http://carla.umn.edu/strategies/resources/SPIclarify.pdf>

տահայտությունները. material, fabric, a kind of, object, stuff, something, metal, when, where, it is a place where, it is used for և այլն, որոնք հնարավոր է օգտագործել ցանկացած երևույթ բացատրելու կամ նկարագրելու համար: Նշված բառերն ու արտահայտությունները կարելի է դասակարգել ըստ գործառնությունների՝ ձև, նյութ, չափ, գույն, կիրառման ոլորտ/վայր:

SHAPE	long, flat, sharp, round, curved, regular, irregular, solid, straight
MATERIAL AND OTHER FEATURES	wood, plastic, cloth, metal, glass, paper It is made of...; It is similar to...; It is like a...
SIZE AND COLOUR	big, huge, small, tiny, medium, dark, light, bright
TPOLOGY	It is a piece of clothing/furniture, equipment It is a kind/type of...; It is an object/device/tool that...
USE	You have to press the key/button; You insert sth inside and...
FUNCTION	It is used for...; You need this to...; It is very useful to...; You wear it...
LOCATION	It is normally found in banks/universities...; You can buy it in a...; It is typical of...

Իրենց ակտիվ բառապաշարը համալրելով նման բառերով ու արտահայտություններով՝ ուսանողները հեշտությամբ կարող են ներկայացնել տարբեր բառերի բացատրություններ և նկարագրություններ, օրինակ՝ market – a place/system through which goods and services are exchanged; stock exchange – a place where shares of various companies are bought and sold; needs – something that a person must have to survive:

Լսարանում հարմար է նաև կիրառել "What do you call...?" կամ "How do you say...?" առաջադրանքը՝ նշելով անծանոթ բառը մայրենի լեզվով կամ ուսանողներին տրամադրելով դրանց պատկերները: Ծանոթ լինելով ռազմավարական իրադեկության հիմնական տարրերին՝ ուսանողները հեշտությամբ կկարողանան իրենց չիմացած բառերը փոխարինել դրանց բացատրություններով կամ նկարագրություններով:

Փորձը ցույց է տալիս, որ երբ ուսումնական նյութը հարուստ է հաղորդակցական ռազմավարության զարգացմանն ուղղված առաջադրանքներով, սովորողները, բախվելով լեզվական պաշարների պակասի խնդրին, կիրառում են իրենց իմացած ռազմավարական հնարքները, ինչն էլ ապահովում է հաղորդակցության անընդհատությունն ու արդյունավետությունը: Այս ամենը նպաստում է ոչ միայն սովորողների ռազմավարական և հաղորդակցական իրադեկությունների ձևավորմանն ու զարգացմանը, այլ նաև ի հայտ է բերում մտածելու, նպատակներ առաջադրելու և դրանց հասնելու ուղիներ գտնելու, սեփական աշխատանքը գնահատելու կարողությունները:

Օգտագործված գրականություն

1. Bachman L., Fundamental Considerations in Language Testing. Oxford: Oxford University Press, 1990.
2. Bongaerts T., Kellerman E., Bentlage A., Perspectives and Proficiency in L2 Referential Communication // Studies in Second Language Acquisition, (9), 1987.
3. Bongaerts T., Poulisse N., Communication Strategies and L1 and L2: Same or Different? // Applied Linguistics, (10), 1989.
4. Canale M., Swain M., Theoretical Bases of Communicative Approaches to Second Language Teaching and Testing // Applied Linguistics, 1980 (1).
5. Cohen A., Second Language Learning and Use Strategies: Clarifying the Issues, 1996. Available at <http://carla.umn.edu/strategies/resources/SP1clarify.pdf>
6. Corder S., Strategies of Communication. In Faerch, C. & Kasper, G. (Eds.), Strategies in Interlanguage Communication. London: Longman, 1983.
7. Dornyei Z., On the Teachability of Communication Strategies // TESOL Quarterly, 29, 1995.
8. Dornyei Z., Thurrell S., Strategic Competence and How to Teach It // ELT Journal, 45, 1991.
9. Faerch C., Kasper G., Plans and Strategies in Foreign Language Communication // Strategies in Interlanguage Communication / Ed. by Faerch C. and Kasper G. London: Longman, 1983.
10. Hyde J., The Identification of Communication Strategies in the Interlanguage of Spanish Speakers // Anglo-American Studies, 2(1), 1982.
11. Kellerman E., Compensatory Strategies in Second Language Research: A Critique, a Revision, and some (non-)Implications for the Classroom // Foreign/Second Language Pedagogy Research: A Commemorative Volume for Claus Faerch, Clevedon, England: Multilingual Matters, 1991.
12. Ogane M., Teaching Communication Strategies, 1998. Available at <http://www.files.eric.ed.gov/fulltext/ED419384.pdf>
13. Paribakht T., Strategic Competence and Language Proficiency // Applied Linguistics. 6(2), 1985.
14. Paribakht T., The Relationship between the Use of Communication Strategies and Aspects of Target Language Proficiency: A Study of Persian ESL Students. Ph.D. Thesis, University of Toronto, 1982.
15. Poulisse N., The Use of Compensatory Strategies by Dutch Learning of English. Dordrecht: Foris, 1990.
16. Tarone E., Teaching Strategic Competence in the Foreign Language Classroom, 1983. Available at <http://files.eric.ed.gov/fulltext/ED278234.pdf>
17. Tarone E., Teaching Strategic Competence in the Foreign Language Classroom. In Savignon, S.J. & Berns, M.S. (Eds.), Initiatives in Communicative Language Teaching. Boston, 1984.
18. Tarone E., Cohen A., Dumas G., Closer Look at Some Interlanguage Terminology: A Framework for Communication Strategies. In Faerch, C. & Kasper, G. (Eds.), Strategies in Interlanguage Communication. London: Longman, 1983.

ЛИЛИТ КАЗАРЯН*Преподаватель кафедры языков АГЭУ*

Важность обучения стратегической компетенции на уроке иностранного языка. – Данная статья рассматривает некоторые аспекты формирования стратегической компетенции обучающихся, которая является важнейшим компонентом коммуникативной компетенции. Качественный процесс общения невозможен, если обучающийся не в состоянии преодолевать коммуникативные затруднения, компенсировать прерванный процесс общения. При дефиците лингвистических ресурсов используется компенсаторная стратегия. Проблема овладения компенсаторными стратегиями привлекала внимание многих исследователей. Статья также подчеркивает необходимость уделять достаточное внимание эффективному обучению “инструментам” стратегической компетенции в учебном процессе, чтобы помочь студентам преодолеть лингвистические затруднения.

Ключевые слова: коммуникативная компетенция, стратегическая компетенция, компенсаторная стратегия, процесс общения, эффективное обучение, учебный процесс.

JEL: Y8, Y9, Z1

LILIT GHAZARYAN*Lecturer at the Language Department ASUE*

Importance of Teaching Strategic Competence. – The present article is devoted to the importance of teaching strategic competence to the students of foreign languages. The primary goal of foreign language teaching is to develop students' communicative competence that enables them to communicate messages in a number of communicative situations. Strategic competence or communication strategies refer to the tools used by the students to cope with the communication problems as a result of the gap between their available linguistic resources and the message they intend to convey. The article emphasizes the necessity of teaching communication strategies in the classroom as an effective tool helping students to achieve their communicative goals when they lack appropriate linguistic resources.

Key words: communicative competence, strategic competence, compensatory strategy, strategic tools, achievement and reduction strategies, paraphrasing, circumlocution, verbal and non-verbal resources, learning material.

JEL: Y8, Y9, Z1